# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 02/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի թիվ 1 պահեստի տանիքի ծածկի վերանորոգման աշխատանքների գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան — 03 օգոստոսի 2017թ., ժ. 16:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Դ. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ռ. Նազինյանը |
| | Ա. Մելիքսեթյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստի օրակարգը.

Հարց 1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 02/17 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի («ԳԱՄՇԻՆ» ՍՊԸ) հայտը մերժելու մասին:

Հարց 2. Հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին («Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ) փաստաթղթեր ներկայացնելու պահանջ առաջադրելու մասին:

Հարց 3. Գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաջորդ նիստի մասին:

Հարց 1.

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ սույն թվականի հուլիսի 25-ին, էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած «ԳԱՄՇԻՆ» ՍՊԸ-ին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև հուլիսի 28-ը) էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն ընկերությունը

սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Որոշեց՝

1. «ԳԱՄՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, մերժել:
2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության՝ 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետով՝ դիմել պատվիրատուի ղեկավարին՝ «ԳԱՄՇԻՆ» ՍՊ ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազոր մարմին ուղարկելու նպատակով, քանի որ ի հայտ է եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով սահմանված անգործություն:
3. Հիմք ընդունելով «ԳԱՄՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Մելիքյանի կողմից 22.07.2017թ-ին միակողմանի սահմանված տուժանքի մասին համաձայնագրի (ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-02/17, հայտի ապահովում) 1.3 կետը՝ դիմել պատվիրատուի ղեկավարին՝ վերը նշված տուժանքի մասին համաձայնագիրը և գնման ընթացակարգին «ԳԱՄՇԻՆ» ՍՊ ընկերության մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով (3-րդ կետ) սահմանված պահանջն ապահովելու նպատակով, ներկայացնել կատարման ընկերությանը սպասարկող բանկ:

կողմ 4, դեմ 0:

<u>Հարց 2.</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը

Որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ հարվերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ առաջադրել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ին:

կողմ 4, դեմ 0:

Հարց 3.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և 46-րդ կետով՝ Հանձնաժողովը

Որոշեց՝

1. Հայտերի գնահատման հաջորդ նիստը նշանակել՝ սույն թվականի օգոստոսի 11-ին, ժամը 14:00-ին:

կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Դ. Գևորգյան

Անդամներ՝ Ռ. Նազինյան

Ա. Մելիքսեթյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան